ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԾՀԱՊՁԲ-3/10-1

ք. Երևան «10» «11» 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Վ. Հովհաննիսյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Սիգռամ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Ն. Աբրահամյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/ հետևյալ հասցեով ք. Երևան, Հասրաթյան 5:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **30 օրից** ավելի,

3.1.8 Ձեռնել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 7 727 000 (յոթ միլիոն յոթ հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամ:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Սույն Պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (*Հավելված N 4*) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (*Հավելված N 4.1*):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգօրյա ժամկետում, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ. Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ ԱՀՏԱ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ		ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ք. Երևան Բագրևանդի 5 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011144079 ՀՎՀՀ 00867415 ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ ՊԺԿ	Տնօրեն	«Սիգռամ» ՍՊԸ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Նորապատ «Արարատբանկ» ՓԲԸ Հ/Հ 1510002022500100 ՀՎՀՀ 01541608
Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ		Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-3/10-1 պայմանագրի

ՀՀ ՊՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	Տեսաձայնային սարքեր (պրոֆեսիոնալ տեսապրոյեկտոր)	NEC P502HL պրոֆեսիոնալ տեսապրոյեկտոր՝ 3D թվային, լազերային, լույսի հեռարձակումը լազերային; 1-chip DLP™ տեխնոլոգիայով; Լյումենս- 5,000 ANSI; Full HD (1,920 x 1,080) /compr. WUXGA (1,920 x 1,200) resolution; պատկերի ֆորմատները՝ (Native / Supported) - 16:9 / 16:10, 4:3; լույսի աշխատանքային ժամային տևողությունը (Light source life 20,000 hours; Կոնտրաստ-ոչ պակաս 150,000:1; Ձեռքով մեծացնելու հնարավորություն- 1,7x; Լինզաները փոխելու հնարավորություն - H:±0.25, V:+0.62,-0; Պրոյեկցոն էկրանի չափը (Projection Screen Size)- ոչ պակաս 30" - 300" դյում, (0.76մ - 7.62 մ) Անկյունային; Հորիզոնական և ուղղահայաց պատկերի կարեկցիա՝ - H=±25°, V=±30° մեխանիկական; Ծրագրի կողմից երկրաչափական ուղղում; Հատուկհատկանիշներ: - 3D DLP; DICOM Simulation – ունի մոխրագույն նկարների ստանդարտացված ֆունկցիա: USB Viewer for JPEG – հնարավորություն: Miracast կապի և ԿԱՅՖԱՅ-ի հնարավորություն: MultiPresenter բազմաֆունկցիոնալություն; LAN-ի հնարավորություն; Էկրանի գույների մեխանիկական ուղղում: ImageCare® տեխնոլոգիա և մեծացնելու հնարավորություն: ներդրված դինամիկներ Speakers - 1 x 20W (mono); բազմալեզու մենյուի հնարավորություն ներառյալ անգլերեն և ռուսերեն; Մուտքը HDMI
2	Տեսաձայնային սարքեր (տեսապրոյեկտորի էկրան)	էկրանբաներ 5mx8m տեսապրոյեկտորի էկրան՝ Ակումբի համար նախատեսված բարձրորակ սպիտակ /ջրադիմացկուն/ բաներ, որը կօգտագործվի որպես էկրան՝ ընդհանուր չափը 40 քմ՝ ամբողջական (5 մետր x8 մետր): Էկրանը պատին ամրացնելու և փակցնելու համար հարմարեցված համապատասխան ամրակներով: Տեղադրման վայրին և նշանակությանը համահունչ՝ պատին ձգված և հարթեցված՝ առանց խոտանների: Տեղադրումը պատվիրատուի նշած վայրում : Ամբողջ տեսականուն տրվում է երաշխիքային սպասարկում 1 տարի:
3	Տեսաձայնային սարքեր (բարձրախոս՝ դինամիկ ակտիվ)	Alto TSsub 15 բարձրախոս՝ դինամիկ ակտիվ 15" SUBWOOFER; crossover on through; 18 mm birch plywood vented cabinet with metal grille and recessed handles; Power 1200W ;Հաճախականությունը Response: 42 Հg - 125Gts: SPL: 126dB մուտք: Mic/Line left + XLR right.ելքեր: XLR: Left link, Right mono (120Hz crossover on thru).Չափերը: 591 x 451 x 513 մմ:Քաշը '30 կգ:
4	Տեսաձայնային սարքեր (ձայնային միկշերային վահանակ)	Alto ZMX124 Ձայնային ղեկավարման վահանակ 12-CHANNEL MIXER WITH EFFECTS AND USB INTERFACE; քսան ընդհանուր մուտքվ /20 total inputs; 3-band EQ with swept mid on microphone channels; 4-band fixed EQ on stereo line channels; Stereo 9-band graphic EQ; 4 AUX sends per channel: 2 PRE/POST faders switchable; 4-bus sub mixer; 60mm high precision faders; 256 24-bit Alesis DSP effects (16 presets × 16 variations); USB audio ինտերֆեյս համակարգչային ծրագրերի ձայնագրման և կառավարման համար հնարավորություն:
5	Տեսաձայնային սարքեր (բարձրախոսի պատին ամրացվող տակդիր)	Պատին ամրացվող աուդիոդինամիկի հենակ; Մետաղական կոնստուկցիայով, տրամագիծը 35մ
6	Տեսաձայնային սարքեր (հեռակառավարվող միկրոֆոն)	SEKAKU WR-101 R հեռակառավարվող միկրոֆոնType: Dynamic Աղմուկի ազդանշանի ընդունում /Signal to Noise 120 dB-A; Ռադիոզգայողականություն 100 Դբ Power DC 12V / 300mA ;Հաճախականությունը միջակայք: 50 Hz-15kHz ; Հաճախականությունը Response: 160-245MHz VHF; Տատանվում է մինչեւ 50 մ ; FM մոդուլացիան, SNR> 90dB; Քաշը- 220g
7	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր)	Soundsation SMICS-100-BK եռոտանի Կարգաբերում 850 - ից 1600 մմ, Երեք ծալովի ոտքերը 360 մմ
8	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր՝ սեղանի)	Soundking DD 044 B միկրոֆոնի տակդիր՝ սեղանի Միկրոֆոնների համար նախատեսված սեղանի շտատիվ /տակդիր/:

9	Տեսաձայնային սարքեր (հաղորդալար՝ բարձրախոսի համար)	Մալուխ՝ դինամիկին համապատասխան մալուխ.; Արտաքին տրամագիծը, 6,15 մմ; Radis BEND - 30 մմ
10	Տեսաձայնային սարքեր (միացման գլխիկներ՝ աքսեսուարներ արական)	Դինամիկին համապատասխան մալուխի միակցիչ-20հատ; Cable միակցիչ (արական) RCS ԱՈՒԴԻՈ; Cable միակցիչ XLR 3 տակառիկ (արական),
11	Տեսաձայնային սարքեր (HDMA մալուխ, վիդեո լար)	HDMA մալուխ, վիդեոլար
12	Տեսաձայնային սարքեր (հոսանքի միացման մալուխ)	Հոսանքի միացման մալուխ-2X2,5 մմ հոսանքի լար, բազմաժիլ
13	Տեսաձայնային սարքեր (վարդակներ՝ պատին ամրացնելու համար)	Պատին ամրացնելու համար վարդակ
14	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (բարձրախոս)	BOSCH LB2-UC15-L Պրեմիում դասի բարձախոսները նախատեսված են հիմնական և ֆոնային երաժշտության, ելույթների բարձրակարգ վերարտադրության համար՝ շենքի ներսում և դրսում:Բարձրախոսները ունեն մուտքի ընտրելու հնարավորություն՝ 8 օհմ, 70 V և 100 Վ: Համապատասխանում է անվտանգության միջազգային ստանդարտներին: Մոնտաժում և տեղադրում՝ Լեռնային Հայաստան հանգստյան տուն-առողջարանում:Կորպուսը՝ ամուր պլաստիկից White
15	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Ուժեղարար)	BOSCH PLE-1ME120 ելքային հզորության լայն դիապազոն՝ (, 120 Watts); Օգտագործվող հզորությունը 400VA; Հաճախականությունը՝ 50 Հg -ից 20 kHz; Միկրոֆոն 70 Հg - ից 20 kHz; Միկրոֆոնային մուտք ՝4; Զգայունությանը՝ 1 mV (MIC), 300 mV *(գիծ)*; Երաժշտություն մուտքային միակցիչ; Զգայունությունը՝ 200 mV; Բարձրախոս ելքային դիմադրություն ՝4 օհմ միակցի չպտուտակով;
16	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Հեռակառավարվող միկրոֆոն՝ 4-ը մեկում /4in1/)	Pro Sound 401X-QUAD խոսափող հեռակառավարվող 4in1: Պարկուճը ապահովում է ձայնի հստակ փոխանցումը: Միկրոֆոնը ունի պողպատյա վանդակ: Միկրոֆոնը աշխատում է ինչպես բաց տարածություններում, այնպես էլ շենքի ներսում: Այն իդեալական է միջոցառումների ժամանակ օգտագործման համար: Հատուկ ներքին ֆիլտրը մեկուսացնում է խոսափողը քամիներից; Միկրոֆոնիտիպը՝ դինամիկ
17	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Միկրոֆոնի եռոտանի հենակ)	Soundsation SMICS-100-BK միկրոֆոնի եռոտանի տակդիր՝ սեղանի Միկրոֆոնների համար նախատեսված սեղանի շտատիվ /տակդիր/:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սիգռամ» ՍՊԸ

Տնօրեն

Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-3/10-1 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Մատակարարումը՝ 2016թ ըստ ամիսների
						դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ
1	Տեսաձայնային սարքեր (պրոֆեսիոնալ տեսապրոյեկտոր)	հավաքածու	1	4060000	4060000	1
2	Տեսաձայնային սարքեր (տեսապրոյեկտորի էկրան)	մետր քառակուսի	40	5800	232000	40
3	Տեսաձայնային սարքեր (բարձրախոս՝ դինամիկ ակտիվ)	հավաքածու	2	400000	800000	2
4	Տեսաձայնային սարքեր (ձայնային միկշերային վահանակ)	հատ	1	425000	425000	1
5	Տեսաձայնային սարքեր (բարձրախոսի պատին ամրացվող տակդիր)	հատ	4	43000	172000	4
6	Տեսաձայնային սարքեր (հեռակառավարվող միկրոֆոն)	հատ	2	220000	440000	2
7	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր)	հատ	2	35000	70000	2
8	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր՝ սեղանի)	հատ	2	25000	50000	2
9	Տեսաձայնային սարքեր (հաղորդալար՝ բարձրախոսի համար)	մետր	100	1000	100000	100
10	Տեսաձայնային սարքեր (միացման գլխիկներ՝ աքսեսուարներ արական)	հատ	20	1000	20000	20
11	Տեսաձայնային սարքեր (HDMA մալուխ, վիդեո լար)	մետր	1	40000	40000	1
12	Տեսաձայնային սարքեր (հոսանքի միացման մալուխ)	մետր	100	400	40000	100
13	Տեսաձայնային սարքեր (վարդակներ՝ պատին ամրացնելու համար)	հատ	10	1000	10000	10
14	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (բարձրախոս)	հատ	6	88000	528000	6
15	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Ուժեղարար)	հատ	1	300000	300000	1
16	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Հեռակառավարվող միկրոֆոն՝ 4-ը մեկում /4in1/)	հատ	1	300000	300000	1
17	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Միկրոֆոնի եռոտանի հենակ)	հատ	4	35000	140000	4

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ ՊԺԿ

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սիգման» ԱՊԸ

Տնօրեն

Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 3
N ԾՀԱՊՁԲ-3/10-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գումար /դրամ/	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ., այդ թվում՝ դեկտեմբեր, բայց ոչ ուշ քան 10.12.2016թ.
1	Տեսաձայնային սարքեր (պրոֆեսիոնալ տեսապրոյեկտոր)	32321120/1/4/1	4060000	4060000
2	Տեսաձայնային սարքեր (տեսապրոյեկտորի էկրան)	32321120/1/4/1	232000	232000
3	Տեսաձայնային սարքեր (բարձրախոս՝ դինամիկ ակտիվ)	32321120/1/4/1	800000	800000
4	Տեսաձայնային սարքեր (ձայնային միկշերային վահանակ)	32321120/1/4/1	425000	425000
5	Տեսաձայնային սարքեր (բարձրախոսի պատին ամրացվող տակդիր)	32321120/1/4/1	172000	172000
6	Տեսաձայնային սարքեր (հեռակառավարվող միկրոֆոն)	32321120/1/4/1	440000	440000
7	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր)	32321120/1/4/1	70000	70000
8	Տեսաձայնային սարքեր (միկրոֆոնի եռոտանի տակդիր՝ սեղանի)	32321120/1/4/1	50000	50000
9	Տեսաձայնային սարքեր (հաղորդալար՝ բարձրախոսի համար)	32321120/1/4/1	100000	100000
10	Տեսաձայնային սարքեր (միացման գլխիկներ՝ աքսեսուարներ արական)	32321120/1/4/1	20000	20000
11	Տեսաձայնային սարքեր (HDMA մալուխ, վիդեո լար)	32321120/1/4/1	40000	40000
12	Տեսաձայնային սարքեր (հոսանքի միացման մալուխ)	32321120/1/4/1	40000	40000
13	Տեսաձայնային սարքեր (վարդակներ՝ պատին ամրացնելու համար)	32321120/1/4/1	10000	10000
14	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (բարձրախոս)	51411110/1/4/1	528000	528000
15	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Ուժեղարար)	51411110/1/4/1	300000	300000
16	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Հեռակառավարվող միկրոֆոն՝ 4-ը մեկում /4in1/)	51411110/1/4/1	300000	300000
17	ձայնաստեղծ սարքերի ձեռքբերման և տեղադրման ծառայություններ (Միկրոֆոնի եռոտանի հենակ)	51411110/1/4/1	140000	140000

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Սիգման» ՍՊԸ

Տնօրեն

Ն. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-3/10-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ԾՀԱՊՁԲ-3/10-1 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ——— -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն